ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2020թ. թիվ 525-Ա

«ԼՈՌԻ ՓԱՄԲԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ
ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզպետի 2006թ. հոկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի և ատեստավորման ընթացակարգերը հաստատելու մասին» թիվ 285-Ն որոշմամբ և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի մայիսի 6-ի թիվ 385-Ա որոշման հիման վրա համակարգչում նախօրոք զետեղված և համակարգչի կողմից պատահական ընտրված 7 թեկնածուների ցուցակը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող «Լոռի Փամբակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2020 թվականի հուլիսի 15-ին ժամը 11.00-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Արթուր Մխիթարյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Նունիկ Ասրյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հուլիսի 14
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հուլիսի 14-ի
թիվ 525-Ա որոշման

«ԼՈՌԻ ՓԱՄԲԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ
ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հարություն Սամվելի Այվազյան	- ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական
Արթուր Ռաֆայելի Մխիթարյան	- ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար
Ռաֆայել Հրայրի Հարությունյան	- ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Սարգիս Միշայի Գրիգորյան	- ՀՀ Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
Ալիկ Լևոնի Սահակյան	- ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Արտավազդ Սուրենի Բեջանյան	- ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Նունիկ Ժորայի Ասրյան	- ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ